ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ Ն.
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/6187/02/24 ք. Երևան
2 Օգոստոսի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ դատարան), նախագահությամբ դատավոր Դանիել Միսեյանի, քննության առնելով թիվ ԵԴ2/6187/02/24 քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը՝

ՊԱՐԶԵՑ

«Թագ ՀԷմ» ՍՊ ընկերությունը դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ «ՀՀ Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ ՀՀ Փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից վերջինիս և «Թագ ՀԷմ» ՍՊ ընկերության միջև 15.12.2023 թվականին կնքված թիվ «ՀՀՓԿ-ԳՀԱՊԶԲ-62/23-4» ծածկագրով պայմանագրի 24.06.2024թ.-ի թիվ 0802-2024 միակողմանի լուծումը անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան և բացակայում են նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը:

Դատարանն արձանագրում է, որ սույն վեճը քննության է ենթակա ՔԴՕ 27.2 գլխով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում՝ հիմք ընդունելով ՔԴՕ 234.6-րդ հոդվածը, անհրաժեշտ է պատասխանող ՀՀ Փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-200-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Պատասխանող «ՀՀ Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Պարզաբանել կողմերին, որ՝

- ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատաս-խանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատար-վելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.
- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույց-ները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:
- Հայցադիմումի պատասխանը կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
- գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայաց-նելու համար սահմանված ժամկետի լրանալը:
- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

4. Եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր սահմանել 11.09.2024 թվականին:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Դանիել Մխեյան

Digitally signed by MKHEYAN DANIEL 2908790114
Date: 2024.08.02 17:09:28 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am